ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 01

21.11.2025Թ. ԿՆՔՎԱԾ N «ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-25/12» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«13» 02 2026թ.

ք. Ծաղկաձոր

Ծաղկաձորի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Ն. Հարությունյան-ի, որը գործում է համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԼԱՅԹԻՆԳ ԱԼԵՔ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Է. Հովնանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 21.11.2025թ. կնքված N «ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-25/12» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5-րդ կետը, պատասխանատու ստորաբաժանման 30.01.2026թ.-ի թիվ 247 մտից զեկուցագիրը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 2)-րդ ենթակետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 21.11.2025թ. կնքված N «ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-25/12» գնման պայմանագրով սահմանված «*Ծաղկաձոր համայնքի Արտավազ-Ֆյունիկ բնակավայրերի արտաքին լուսավորության համակարգի արդիականացման աշխատանքներ»-ի* կատարումը սկսել **2026 թվականի մարտի 1-ին**:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Ծաղկաձորի համայնքապետարան | «ԼԱՅԹԻՆԳ ԱԼԵՔ» ՍՊԸ |
| ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 | ք.Երևան, Վարդանանց 20 |
| ՀՀ ՖՆ ԳՎ | «Կոնվերս Բանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 03027029 | ՀՎՀՀ 00165727 |
| ՀՀ 900122002323 | ՀՀ 11930061966720100 |
| Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան | Տնօրեն Է.Հովնանյան |
| ------------------------------ /ստորագրություն/ Կ.Տ | ------------------------------ /ստորագրություն/ Կ.Տ |

*Հավելված N 3*
*« 21 » Նոյեմբեր 2025 թ. կնքված*
*ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-25/12 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** ***Վճարումները կկատարվեն համապատասխան կատարողական ակտերի հիման վրա: | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45311137 | «Ծաղկաձոր համայնքի Արտավազ-Ֆլոնիկ բնակավայրերի արտաքին լուսավորության համակարգի արդիականացման աշխատանքներ» | 0 | 0 | 57 780 000 | 57 780 000 | 57 780 000 | 57 780 000 | 57 780 000 | 57 780 000 | 57 780 000 | 57 780 000 | 57 780 000 | 57 780 000 | 57 780 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
ՀՀ ՖՆ ԳՎ
ՀՎՀՀ 03027029
ՀՀ 900122002323
Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան

---------------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«ԼԱՅԹԻՆԳ ԱԼԵՔ» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 20
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00165727
ՀՀ 1193006196672О100
Տնօրեն Է. Հովնանյան

---------------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ